ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի փետրվարի 26-ից մարտի 2-ը
ք.Սինգապուր /Սինգապուրի Հանրապետություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Սինգապուր, Սինգապուրի Հանրապետություն, 2018 թվականի փետրվարի 26-ից մարտի 2-ը

4. Հրավիրող կողմը՝

Սինգապուրի Հանրապետության նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքման շուրջ բանակցությունների երրորդ փուլին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների երրորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ շուկայի հասանելիություն, ապրանքների ծագման կանոններ, մաքսային ընթացակարգեր և առևտրի դյուրացում, ներքին շուկայի պաշտպանություն, տեխնիկական կանոնակարգեր, սանիտարական, անասնաբուժական և ֆիտոսանիտարական միջոցներ, մրցակցություն, մտավոր սեփականության իրավունք, էլեկտրոնային առևտուր:

Համաձայնագրի նախագծի նախնական տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

Բանակցությունների շրջանակներում քննարկվել է նաև Համաձայնագրին կից ծառայությունների և ներդրումների մասին արձանագրության նախնական տեքստը:

Մասնավորապես՝ քննարկվել են սահմանումները, ինչպես նաև մենաշնորհներին և բացառիկ ծառայություններ մատուցողներին, պաշտպանության միջոցառումներին, ազգային և առավել բարենպաստության ռեժիմներին, քանակական սահմանափակումներին վերաբերող հոդվածները: Սինգապուրի կողմից ներկայացվեց նաև «Հեռահաղորդակցություն» բաժնի տեքստը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Սինգապուրի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում որոշ հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական չորրորդ փուլը կանցկացվի 2018 թվականի հունիս ամսին Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից որևէ մեկի տարածքում:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների երրորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի
Եվրասիական տնտեսական միության և
արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

06.03.2018 թ.